ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

Ի պատասխան Ձեր 26.08.2024թ. հ. 253-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգին ընդհանուր առմամբ և հատկապես այգու բանուկ մասը գտնվում է բարվոք վիճակում: Այգին ամբողջությամբ բարեկարգելու աշխատանքների համար, նպատակահարմարության դեպքում, 2025 թվականին կարող է պատվիրվել նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ՝ բարեկարգման աշխատանքները հետագա տարիների ծրագրերում ընդգրկելու համար:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների կողմից կատարված տեղատեսության արդյունքում Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոց հ.2 շենքի հետնամասում՝ Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգու տարածքում վարչական իրավախախտման դեպքեր չեն արձանագրվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ